EXPORT
INSURANCE AGENCY
OF ARMENIA

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏ 2024

Եթե արտահանողը օտարերկրյա գնորդի հետ ունի հետաձգված վճարման պայման և ցանկանում է համալրել ընկերության շրջանառու միջոցները արտահանումից անմիջապես հետո, ապա կարող է օգտվել «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ ՀԱԱԳ) կողմից առաջարկվող Միջազգային ֆակտորինգի ապահովագրության ծառայությունից՝ հնարավորություն ունենալով լրացնելու անբավարար շրջանառու միջոցները և ապահովելու ապրանքների արտադրության անխափան ցիկլը՝ բանկին զիջելով օտարերկրյա գնորդի նկատմամբ ունեցած պահանջի իրավունքը: Իսկ օտարերկրյա գնորդի կողմից վճարումը չկատարելու դեպքում ՀԱԱԳ-ը ֆինանսավորում տրամադրած բանկին (ֆակտոր) կվճարի ապահովագրական հատուցում:

Ի՞ՆՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

➤ ԲԱՆԿԵՐԻ ՀԱՄԱՐ

- Ապահովված պահանջի իրավունքի ընդունում և ֆինանսավորման չմարման ռիսկերի զսպում
- Ֆինանսավորման ծավալների ավելացում

➤ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Հետաձգված վճարման պայմանի առկայության պարագայում ֆինանսավորում առանց գրավի՝ անմիջապես արտահանումից հետո
- Արտահանումից հետո ֆինանսական միջոցների հոսքի անընդհատության ապահովում

Ի՞ՆՉ ՌԻՍԿԵՐ Է ԾԱԾԿՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային ֆակտորինգի ապահովագրությունը ծածկում է արտահանողի կողմից բանկին զիջված պահանջի իրավունքի դիմաց գնորդի չվճարման ռիսկը:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Չհատուցվող գումար՝ 10%-25%
- Ապահովագրական սակագին՝ 065% - 2,1%
- Սպասման ժամանակահատված 1-6 ամիս

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՈՐԾՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ